ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » մայիսի 2023 թվական N 339 - Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2023 թվականի մայիսի 11-ի
N 339-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսությունը երկրի պարենային ապահովության և անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է և ընդհանուր ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր: Ագրարային ոլորտի պետական քաղաքականության առանցքային ուղղություններից է առկա ռեսուրսային ներուժի առավել արդյունավետ օգտագործման համար պայմանների ստեղծումը: Այս առումով մեր հանրապետության բնատնտեսական պայմաններում հիմնավորված է համարվում ջերմատնային տնտեսությունների զարգացումը:

2. Ամբողջ տարվա ընթացքում թարմ և որակյալ բանջարեղենով շուկան ապահովելու համար օգտագործվում են ջերմատնային տնտեսությունները: Դրանք բույսերի մշակության համար կառուցված արհեստական համակարգեր են, որոնք պաշտպանում են բույսերը կլիմայական պայմանների կտրուկ փոփոխություններից, հիվանդություններից ու վնասատուներից՝ ապահովելով բարձր բերքատվություն:

3. Ծրագիրը նպատակ է հետապնդում խթանել ջերմատների կառուցումը, ինչը հնարավորություն կտա բարձրացնել ջերմատնային տնտեսությունների արտադրանքի մրցունակության մակարդակը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսվարողների եկամուտների ավելացմանը:

4. Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ջերմատնային տնտեսություն՝ գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման համար նախատեսված լուսաթափանց ծածկոցով արդյունաբերական, պաշտպանական կառույց,

2) նոր կառուցված ջերմատնային տնտեսություն՝ նախագծանախահաշվային ցուցանիշներով՝ նոր հիմքերով և մետաղական կմաղքով կառուցված ջերմատնային տնտեսություն,

3) ***ժամանակակից սարքավորումներ***՝ ջեռուցման, հովացման, ոռոգման և սնուցման, լուսավորության, օդափոխության լիարժեք ավտոմատացված վերահսկողությամբ

կառավարման համակարգեր՝ տեղադրված ջերմատնային տնտեսության ներքին և (կամ) արտաքին հատվածներում,

4) ***ջեռուցվող ջերմատնային տնտեսություն՝*** տվյալ տարվա մինչև ապրիլի 1–ն ընկած ժամանակահատվածում էլեկտրականությամբ, և (կամ) գազով, և (կամ) հեղուկ, և (կամ) պինդ վառելիքով ջեռուցվող և շահագործվող ջերմատնային տնտեսություն: Ջեռուցման համակարգը ներառում է ջեռուցման կաթսա և (կամ) ջերմափոխանակիչ՝ օդի տաքացման համար նախատեսված սարք,

5) ***ջերմասեր կուլտուրաներ՝*** լոլիկ, վարունգ, պղպեղ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, ելակ և ծաղիկ:

5. Ծրագրով ներկայացվում են Արցախի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների տարածքների ավելացման խթանմանն ու արդիականացմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի տեղական արտադրության ծավալներն ապահովում են ինքնաբավության ցածր մակարդակ և առաջնահերթ խնդիրը դրանց արտադրության ծավալների ավելացումն ու ինքնաբավության մակարդակի հետագա բարձրացումն է, ինչպես նաև բնակչության թարմ բանջարեղենի պահանջարկի ապահովումը տարվա այն եղանակին, երբ դաշտային պայմաններում դա հնարավոր չէ:

7. Ծրագրի հիմնական նպատակն է պետական աջակցության միջոցով ավելացնել ջերմատնային տնտեսությունների մակերեսներն ու արտադրանքի արտադրության ծավալները, բարձրացնել արտադրված արտադրանքի մրցունակության մակարդակը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

8. Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1) ջերմատնային տնտեսությունների կառուցման համար անհրաժեշտ ներդրումների ներգրավում և կառուցման ծախսերի փոխհատուցման մեխանիզմների առաջադրում,

2) ծրագրի իրականացման հնարավոր ռիսկերի գնահատում և դրանց մեղմանն ուղղված միջոցառումների մշակում,

3) ջերմատնային տնտեսությունների ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով չափորոշիչների առաջադրում,

4) ջերմատնային տնտեսությունների և դրանց տեխնոլոգիական ապահովման մատչելի տարբերակների առաջադրում:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

9. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման գործընթացը:

10. Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) ջեռուցվող ջերմատնային տնտեսությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում,

2) նոր ջերմատնային տնտեսության կառուցման դիմաց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում,

3) ջերմատնային տնտեսությունում կարկտապաշտպան ցանցի տեղադրման դիմաց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում:

11. Տեղական ինքնակառավարման մարմինները (Ստեփանակերտ քաղաքում՝ Նախարարությունը), հիմք ընդունելով Ծրագրով սահմանված ժամկետները, ընդունում են Ծրագրի 12-րդ և 14-րդ կետերով սահմանված միջոցառումների շրջանակում հողօգտագործողների հայտերը: Ծրագրի 13-րդ կետով սահմանված միջոցառման շրջանակում հայտերը ներկայացնում են Նախարարություն՝ համաձայն ձև 1 և ձև 2-ի: Հայտերի հետ միաժամանակ հողօգտագործողները տեղական ինքնակառավարման մարմիններ (Ստեփանակերտ քաղաքում՝ Նախարարություն) են ներկայացնում համայնքների վարչական սահմաններում գտնվող համապատասխան տարածքների նկատմամբ սեփականության, և (կամ) վարձակալության, և (կամ) անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ Վկայական) և անձնագրերի պատճենները: Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդհանրացնում և շրջանների վարչակազմեր են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք (տեղեկանքը ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը)՝ նշելով հողօգտագործողի ազգանունը, անունը, հայրանունը, անձնագրային տվյալները, Վկայականի համարը և փաստացի մշակված ջերմատնային տնտեսությունների մակերեսները՝ կցելով նաև հայտերի, վկայականների պատճենները: Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող տարածքների վարձակալները հայտերը և կից փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմ:

12. Ջեռուցվող ջերմատնային տնտեսությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում՝

1) Արցախի Հանրապետությունում սեփականության, և (կամ) վարձակալության, և (կամ) անհատույց օգտագործման իրավունքով հատկացված հողատարածքներում շահագործվող ջեռուցվող ջերմատնային տնտեսություններում ջերմասեր կուլտուրաների մշակություն իրականացվող տնտեսվարողներին անհատույց տրամադրվում է 1 քառակուսի մետրի դիմաց 1000 ՀՀ դրամ,

2) սույն միջոցառումից օգտվելու համար պարտադիր պայման է հանդիսանում մեկ ամբողջական ջեռուցվող ջերմատնային տնտեսության մակերեսը ոչ պակաս, քան 100 քառակուսի մետր լինելը,

3) Նախարարությունը՝ սույն միջոցառման շրջանակում Ստեփանակերտ քաղաքում ջեռուցվող ջերմատնային տնտեսություններով զբաղվող հողօգտագործողների հայտերը, իսկ Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը շրջաններում ջեռուցվող ջերմատնային տնտեսություններով զբաղվող անձանց վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 1 աղյուսակի, ընդունում է մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը,

4) սույն միջոցառման շրջանակում անհատույց ֆինանսական միջոցների տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով ստեղծվում է հանձնաժողով՝ Նախարարության և համապատասխան շրջանների վարչակազմերի ներկայացուցիչների ընդգրկմամբ,

5) Հանձնաժողովը, Ծրագրի 12-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է փաստաթղթերը, ստուգում դրանց ճշտությունը, ընդհանրացնում և տալիս եզրակացություն,

6) Նախարարությունը դրական եզրակացություն ստացած հայտատուների հետ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է համապատասխան պայմանագրեր:

13. Նոր ջերմատնային տնտեսություն կառուցած անձանց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում՝

1) Արցախի Հանրապետությունում սեփականության և (կամ) վարձակալության և (կամ) անհատույց օգտագործման իրավունքով հատկացված հողատարածքներում՝

ա. նոր ջերմատնային տնտեսության կառուցման դիմաց անհատույց տրամադրվում է նախագծանախահաշվային փաստաթղթի արժեքի հիման վրա ներկայացված կատարողական ակտերի 80 տոկոսի չափով ֆինանսական միջոցներ,

բ. շահագործվող, առանց ժամանակակից սարքավորումների ջերմատնային տնտեսություններում ցանկացած ժամանակակից սարքավորումներ տեղադրելու, ինչպես նաև հիդրոպոնիկ եղանակով մշակության անցնելու դեպքում, անհատույց տրամադրվում է փաստացի տեղադրված սարքավորումների արժեքի 80 տոկոսի չափով ֆինանսական միջոցներ,

2) սույն միջոցառումից օգտվելու համար պարտադիր պայմաններ են հանդիսանում՝

ա. առանց ժամանակակից սարքավորումների կիրառմամբ ջերմատնային տնտեսության կառուցման դեպքում՝ նվազագույնը 100 քառակուսի մետր (մեկ ամբողջական տարածքով) մակերեսով ջերմատնային տնտեսության կառուցումը (կառուցվող ջերմատնային տնտեսության կոնստրուկցիայի մետաղական, ծածկը պոլիէթիլենային թաղանթ՝ հաստությունը առնվազն 150 միկրոն, և(կամ) ապակի, և(կամ) պոլիկարբոնատ, կողային հենասյուների

բարձրությունը 2 մետրից ոչ պակաս, իսկ կենտրոնական բարձրությունը՝ 4,5 մետրից ոչ պակաս լինելը),

բ. ժամանակակից սարքավորումների կիրառմամբ ջերմատնային տնտեսության կառուցման դեպքում՝ նվազագույնը 300 քառակուսի մետր (մեկ ամբողջական տարածքով) մակերեսով ջերմատնային տնտեսության կառուցումը (կառուցվող ջերմատնային տնտեսության կոնստրուկցիայի մետաղական, ծածկը երկշերտ պոլիէթիլենային թաղանթ՝ հաստությունը առնվազն 150 միկրոն, և(կամ) ապակի, և(կամ) պոլիկարբոնատ, կողային հենասյուների բարձրությունը 3.5 մետրից ոչ պակաս, իսկ կենտրոնական բարձրությունը՝ 4,5 մետրից ոչ պակաս լինելը),

գ. ցանկացած ժամանակակից սարքավորումներ տեղադրելու, ինչպես նաև հիդրոպոնիկ եղանակով մշակության անցնելու դեպքում՝ նվազագույնը 300 քառակուսի մետր (մեկ ամբողջական տարածքով) մակերեսով գործող ջերմատնային տնտեսության առկայությունը,

3) Նախարարությունը սույն Ծրագրի 13-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով սահմանված միջոցառման համար հայտերն ընդունում է մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը, իսկ «բ» պարբերությունով սահմանված միջոցառման համար՝ հոկտեմբերի 1-ը,

4) սույն միջոցառման շրջանակում նոր ջերմատնային տնտեսություն կառուցած անձինք, երեք տարի ջերմատնային տնտեսությունը չշահագործելու դեպքում, պետության կողմից տրամադրված ֆինանսական միջոցները պարտավոր են հետ վերադարձնել Արցախի Հանրապետության պետական բյուջե՝ խախտումը հայտնաբերելու պահից երեք ամսվա ընթացքում,

5) Նախարարության կողմից առաջարկվում է ջերմատնային տնտեսությունների կառուցման և տեխնոլոգիական ապահովման տարբերակներ, որոնց կիրառումը չի հանդիսանում պարտադիր պայման: Այլ չափորոշիչներով նոր ջերմատնային տնտեսություն կառուցելու դեպքում, շահառուի կողմից պատվիրվում է նոր նախագծանախահաշվային փաստաթղթեր,

6) սույն միջոցառման շրջանակում անհատույց ֆինանսական միջոցների տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով Նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով,

7) հանձնաժողովը հայտերի ներկայացումից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, ջերմատնային տնտեսությունների կառուցման և հետագա ջեռուցման հնարավորություններն ու պայմանները՝ տալիս եզրակացություն՝ տվյալ տարածքում Ծրագրի իրականացման նպատակահարամարության մասին,

8) հանձնաժողովի տված դրական եզրակացության դեպքում, այն հայտատուները, ովքեր չեն օգտվում Նախարարության կողմից առաջարկվող որևէ տարբերակից, պատվիրում և նախարարություն են ներկայացնում նոր ջերմատնային տնտեսությունների կառուցման համար նախատեսված աշխատանքների փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերը,

9) պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով Նախարարությունը ընդհանրացնում է դրական եզրակացություն ստացած հայտատուների ցանկը՝ նշելով նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության արդյունքները, նախատեսված կատարվելիք աշխատանքների ծավալները և անհատույց վճարման ենթակա գումարները՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքում համապատասխան պայմանագրեր՝ պետական աջակցության տրամադրման նպատակով,

10) Նախարարությունը կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցներով,

11) սույն միջոցառման շրջանակում կատարված աշխատանքների ընդունումն իրականացնում է Նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը՝ նոր կառուցված ջերմատնային տնտեսության դեպքում կատարողականի ներկայացման, իսկ ցանկացած ժամանակակից սարքավորումներ տեղադրելու դեպքում, հայտատուի կողմից ավարտելու մասին նախարարությանը տեղեկացնելու օրվանից հետո՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում,

12) սույն միջոցառման շրջանակում շահառու չի կարող հանդիսանալ այն անձը, ով նույն ջերմատնային տնտեսությունը կառուցելու համար արդեն իսկ օգտվել է մեկ այլ պետական աջակցության ծրագրից (փոխառություն, վարկ՝ տոկոսի սուբսիդավորմամբ և այլն), բացառությամբ այն անձանց, ովքեր կպարտավորվեն սույն միջոցառման շրջանակում պետական աջակցության միջոցով ամբողջությամբ մարել պետության հանդեպ ունեցած պարտավորությունները:

14. Ջերմատնային տնտեսությունում կարկտապաշտպան ցանցի տեղադրման դիմաց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում՝

1) ջերմատնային տնտեսություններում կարկտապաշտպան ցանց տեղադրած անձանց անհատույց տրամադրվում է՝ 1 քառակուսի մետրի դիմաց 500 ՀՀ դրամ,

2) Նախարարությունը՝ սույն միջոցառման շրջանակում Ստեփանակերտ քաղաքում ջերմատնային տնտեսություններում կարկտապաշտպան ցանց տեղադրած անձանց հայտերը, իսկ Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը՝ շրջաններում ջերմատնային տնտեսություններում կարկտապաշտպան ցանց տեղադրած անձանց վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 2 աղյուսակի, ընդունում է մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը,

3) սույն միջոցառման շրջանակում անհատույց ֆինանսական միջոցների տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով Նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով՝ Նախարարության և համապատասխան շրջանների վարչակազմերի ներկայացուցիչների ընդգրկմամբ,

4) Հանձնաժողովը, Ծրագրի 14-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ տեղեկությունների ներկայացման պահից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում դրանց ճշտությունը, ընդհանրացնում և տալիս եզրակացութուն,

5) Նախարարությունը դրական եզրակացություն ստացած հայտատուների հետ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է համապատասխան պայմանագրեր:

15. Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված համապատասխան միջոցներից:

4.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

16. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) 1.5 հեկտար նոր կառուցվող ջերմատնային տնտեսությունների կառուցում և 1 հեկտար կարկտապաշտպան ցանցի տեղադրում,

2) գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և ստացվող բերքի որակի բարձրացում,

3) կարկտապաշտպան ցանցերի տեղադրման դեպքում՝ ջերմատան և ակնկալվող բերքի ապահովագրում,

4) ջերմատնային տնտեսություններով զբաղվող տնտեսվարող սուբյեկտների եկամուտների ավելացում, մրցունակության մակարդակի բարձրացում:

Ձև 1

Արցախի Հանրապետության

գյուղատնտեսության նախարարություն

Հ Ա Յ Տ

Դիմող՝

_____

(ֆիզիկական կամ իրավաբանական անձի ազգանունը, անունը, հայրանունը (անվանումը))

Բնակության վայրը (գտնվելու վայրը) և հեռախոսահամարը

_____

Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի համարները _____

Պետական գրանցման վկայականի համարը

_____

Գործունեության իրականացման վայրը _____

Նախատեսում եմ կառուցել _____ քառակուսի մետր մակերեսով առանց ժամանակակից տեխնոլոգիաներով և (կամ) ժամանակակից տեխնոլոգիաներով նոր ջերմատնային տնտեսություն:

Հայտին կից ներկայացվում են՝

- Ֆիզիկական անձի անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի պատճենները
- Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը
- Գործունեության իրականացման վայրի նկատմամբ իրավունքը (թույլտվություն) հաստատող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում)

Ներկայացված փաստաթղթերը ենթակա չեն վերադարձման:

Լրացուցիչ տեղեկություններ

_____

_____

_____ _____

(ազգանունը, անունը) (ստորագրություն)

«____» _____ 20 __ թ.

Ձև 2

Արցախի Հանրապետության

գյուղատնտեսության նախարարություն

Հ Ա Յ Տ

Դիմող՝

_____

(ֆիզիկական կամ իրավաբանական անձի ազգանունը, անունը, հայրանունը (անվանումը))

Բնակության վայրը (գտնվելու վայրը) և հեռախոսահամարը

_____

Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի համարները _____

Պետական գրանցման վկայականի համարը

_____

Գործունեության իրականացման վայրը _____

Ունեմ _____ քառակուսի մետր մակերեսով առանց ժամանակակից տեխնոլոգիաների շահագործվող ջերմատնային տնտեսություն, որտեղ նախատեսում եմ տեղադրել ժամանակակից սարքավորումներ, այդ թվում_____:

Հայտին կից ներկայացվում են՝

- Ֆիզիկական անձի անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի պատճենները
- Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը
- Գործունեության իրականացման վայրի նկատմամբ իրավունքը (թույլտվություն) հաստատող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում)

Ներկայացված փաստաթղթերը ենթակա չեն վերադարձման:

Լրացուցիչ տեղեկություններ

_____

_____

_____ _____

(ազգանունը, անունը) (ստորագրություն)

«____» _____ 20 __ թ.

Աղյուսակ N 1

Արցախի Հանրապետությունում ջեռուցվող ջերմատնային տնտեսությամբ զբաղվող անձանց վերաբերյալ

Հ/Հ	Համայնքը	Ազգանունը, անունը, հայրանունը	Անձնագրային տվյալները	Ջեռուցվող ջերմատան մակերեսը (քառ.մետր)
1				
2				
3				
...				
Ընդամենը՝ շրջանում				

Աղյուսակ N 2

Արցախի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունում կարկտապաշտպան ցանց տեղադրած անձանց վերաբերյալ

Հ/Հ	Համայնքը	Ազգանունը, անունը, հայրանունը	Անձնագրային տվյալները	Տարածքը (քառ.մետր)
1				
2				
3				
...				
Ընդամենը՝ շրջանում				

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ *Ա. ԼԱՉԱՐՅԱՆ*